հասարակ Անդրկովկասում տարածված ձևը, որն անշուշտ մշակվել է տեղում, ինչպես այդ երևում է այն իրերից, որոնք գտնվում են մեր թվարկությունից առաջ առաջին հազարամյակին պատկանող հին թաղումների մեջ։ Այսպես՝ Բայերնի և Մորգանի պեղումները հայտնաբերել են բրոնզե դարի վերջերի դամբարաններում կամէր, բոլորովին նույն ձևի, ինչ որ մինչև վերջերքը մնում էր ընդհանուր գործածության մեջ։ Զանգեզուրում տարածված էր երկփեղկ կամը, մինչդեռ Լոռում ավելի հաճախակի հանդիպում է միափեղկ լայն տեսակը, մի բան, որ բացատրվում է հաստաբուն ծառերի առկայությամբ Լոռվա ճոխ անտառներում։

Խուրձերը թե՛ դիզում էին և թե՛ դեզից ցած բերում կալի վրա բաց անելու ժամանակ երկմատ եղանով՝ ճէշայավ, յէղօլիավ[38]։ Դա մի հաստ երկճեղ ճյուղ է, որի մատները դեպի վեր են ծռվում։ Կալի վրա հասկերը պարանում[39] էին շորս կամ հինգմատանի վրցէլիավ[40]։ Ներգաղթած հայերի համայնքներում քառէշտավ կամ ավելի մեծ և հաճախ մի փայտից շինած լամփարավ կալի մեջտեղը հավաքում էին ծեծածը և վերջը դարմանը մղում էին մարագը մղանավ։ Դա մի 60—70 սմ երկարություն և 25—30 սմ լայնություն ունեցող ուղղահայաց տախտակ է, որի ստորին մասի ծակի մեջ նստեցրած է երկար կոթը։ Քամում՝ էրան էին տալիս, թիակում էին թեթև թիակավ։



Գծ. 9. Թակ։

Ավելի լայն ու երկար ծանր թին գործ էր ածվում գլխավորապես տէրմանը մարագ ձգելու և նրա մեջ հավասար տեղավորելու համար։ Նրա հետ հավասարապես աշխատում էին և ավելի թեթև լամփարավ։ Հետաքրքրական է, որ Զանգեզուրի բոլոր գյուղերում գործ է ածվում միայն կալը թակել՝ կալը ծեծել դարձվածքները։ Սա անշուշտ կալսելու հնագույն ձևի հիշողության մնացորդն էր, որը բերել են հնդեվրոպական էթնիկ տարրերը իրենց նախնական հայրենիքից, որտեղ հասկերի միջից հատիկները անջատում էին ծեծելով, թակելով[41]։ Թվում է, թե այդ նախահայրենիքից էր բերված և տէփ կառուցելու սովորությունը, որը շատ է հիշեցնում ռուսական «гумно-ն», որտեղ խուրձերը թողնում էին չորանալու և ապա հենց ներսում ծեծում։

Կալի աշխատանքները վերջանում էին հատիկները հողից, դարմանի մնացորդից և ամեն տեսակ աղբից մաքրելով։ Այնուհետև բերվում էին մաղերը՝ խոշոր աչքերով շրտարարնէրը[42] ոլորած կաշվե թելերով հյուսված, ցորենի, գարու և մանավանդ հաճարի համար. երբեմն օգտագործում էին և խախալնէրը ավելի մանր աչքերով, նույնպես կաշվե, բայց ավելի բարակ թելերով հյուսված, առավելապես ցորենի համար։ Ամենաբարակ մաղը, մագից

38 Արծվանիկ։

39 Ըստ Պարսկաստանից գաղթած համայնքների տերմինների՝ շրնում էին։

40 Արծվանիկում՝ քրմէլիավ։

41 Цепами молотить.

42 Ներգաղթած համայնքներում ընդունված էր սարադ բառը։